

Շահ Սէֆիի դահ բարձրանալու ատեն Մովսէս Տաթևացի Սպահան կը գտնուէր: Դաւրիժեցի կը գրէ.

«Յորժամ թագաւորեաց Շահսէֆին, քան-  
զի թագաւոր էր եւ մանուկ տիօք. եւ ամենայն  
նախարարքն եւ իշխանքն՝ որք կային ի դուռն  
նորա, ճանաչէին ի քրիստոնէից զայս երեւե-  
լիս, եւ մանաւանդ զիօջայ Նազարն՝ որ նախա-  
պատիւ էր քան զամենեւեան. զոր եւ այս Խա-  
ջայ Նազարս գրէ յԱսպահանայ առ Մովսէս  
վարդապետն, եւ փայեկաւ հասուցանէ ի նա՝  
որ էր ի սուրբ էջմիածին յայնժամ, զալ փու-  
թանակի ի դուռն արքային, զի թերեւս հնա-  
րեացն բառնալ զհարիւր թումայն մուղա-  
ղայն»:

«Յայնժամ Մովսէս վարդապետն աճա-  
պարեալ եհաս յԱսպահան, եւ միջնորդու-  
թեամբ Խօջայ Նազարիս բազում գանձս ծախ-  
եալ, եւ յոգնակի աշխատութիւնս կրեալ, հա-  
զիւ թէ կարացին բառնալ զհարիւր թուման  
մուղաղայն, որ ծանր բեռն անկաւ ի վերայ  
կաթուղիկոսարանին. զի Շահսէֆին հրամայ-  
եաց եւ զիր ետ թէ՛ անցայ ի հարիւր թուման  
մուղաղայն»: (37)

(37) «Պատ.» Դաւրիժեցւոյ, — էջ 239: «Եւ  
եղեւ ի ժամանակս այս պատշաճ եւ ըմբոն  
ժամ, վասն բառնալոյ ճ (100) թուման մու-  
ղաղային. վասն որոյ ժողովուրդքն Ջուղա-  
յեցւոց բնակեալքն ի քաղաքն Ասպահան, եւ  
մանաւանդ ողորմութեանցն Աստուծոյ ար-  
ժանին քրիստոսասէր մեծ իշխանն Խօջայ Նա-  
զար գրեալ թուղթ՝ սրբնթաց փայեկաւ հասու-  
ցին յէջմիածին առ Մովսէս վարդապետն,  
վաղվաղակի հասանիլ ի դուռն նորնծայ թա-  
գաւորին, վասն բառնալոյ ճ (100) թումանին.

Դաւրիժեցի, առնելով Ղուկաս Գառնեցիէ,  
ուրիշ տեղ մը կը գրէ.

«Ապա սուրբ այրն Աստուծոյ (Մովսէս)  
պատրաստեաց զընծայ՝ որպէս վայել է թագա-  
ւորաց. սկուտեղամբ զուտ ոսկի դահեկան, եւ  
այլ եւս ինչ պատուականս, եւ գրեալ զիրս  
յօժարութեան՝ որ է արդայ. եւ վարդապետն  
եւ Խօջայ Նազարն միջնորդութեամբ նախարա-  
րացն ձօնեցին առաջի թագաւորին, որ ի հար-  
ցանին արքայի վասն վարդապետին, իրադաժ-  
արար գնա Խօջայ Նազարն, պատմելով նմա  
զազնուականութենէ վարդապետին: Այլ եւ  
թէ նախածանօթ եւ հաճելի ծառայ էր յառա-  
ջագոյն մեծի թագաւորին՝ հաւուն քում. եւ  
այժմ եւս աղօթող է վասն կենաց թագաւորին.  
բայց զայս ինչ խնդիրս ունի, զի այց արարեալ  
զթասցի ի տառապեալ ժողովուրդս իւր ար-  
քայ՝ եւ զծանր բեռն, որ ընդ վայր եւ ի տա-  
րապարտուց եղաւ ի վերայ մեր, այսինքն հա-  
րիւր թուման մուղաղայն, հրամայեցս՝ ար-  
քայ բառնալ զայն»:

«Եւ արքայ Շահսէֆի անդէն ի հանդիսին  
յոլով բանս խօսեցաւ ընդ Խօջայ Նազարին, այլ  
եւ եհարց ի Մովսէս վարդապետէն վասն մու-  
ղաղայ հարիւր թումանին, եւ ողորմութեամբն  
եւ շնորհօքն աստուածային՝ ամենայն բանք  
վարդապետին զիւրին եւ ախորժ թուէր առա-  
ջի թագաւորին: Քանզի ամենաթագաւորն  
Աստուած, որ ունի ի ձեռին զսիրտս թագա-  
ւորաց, հաճեցոյց եւ քաղցրացոյց զկամս թա-

որ եւ անյապաղ ճեպով ելեալ Մովսէս վար-  
դապետն գնաց յԱսպահան քաղաք ի դուռն  
թագաւորին. եւ կացեալ ի դրան թագաւորին  
ամիսս ութ. եւ տեսեալ զամենայն նախա-  
րարս, զհինս եւ զնորս եւ հաճեալ զմիտս նո-  
ցա բազմաբնծայ աղերսիւ:» (Անդ՝ էջ 309):